## Թեստ 4

*1-12-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ*

1. Ի ձայնավորի հնչյունափոխություն կա

   1) ընպան
   2) գնդասեղ
   3) ընչազուրկ
   4) ընչացք

բառում:

2. Բոլոր բառերի բաց թողած տեղերում միևնույն տառը գրվող շարքն է(փակագծերում նշվածներից որևէ մեկը)՝

   1) կ...տար, վ...տալ, նա...ճիր (ղ կամ խ)
   2) ան...ացուպ , գեղար..., շոր...ել (դ կամ թ)
   3) սայթա...ել, մար...ագետին, գինարբու... (գ կամ ք)
   4) գլուխկոն...ի, կառու...վածք, ձյունածա...կ (ծ կամ ց)

3. Հատուկ անունների բոլոր բաղադրիչները մեծատառով գրվող շարքն է՝

   1) ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ, ՎԵՐԻՆ ՀՈՌԱԹԱՂ, ԱՐԱՔՍ ԳԵՏ
   2) ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ, ՆՈՐ ՏԱՐԻ, ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ ԿՂԶԻ
   3) ՊԱՄԻՐԻ ԼԵՌՆԵՐ, ԴԱՆԻԵԼ ԴԵՖՈ, ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ
   4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՓՈՔՐ ԱՍԻԱ, ՆԵՐՍԵՍ ՄԵԾ

4. Դարձվածքի բացատրության սխալ կա

   1) հացի մեջ աղ չլինել- երախտիքը չգնահատվել
   2) հոգին հանել-չարչարել
   3) բերանը փակ- գաղտնապահ
   4) կանաչ-կարմիրը կապել- զարդարել

շարքում:

5. Բարդածանցավոր բառերի շարքն է՝

   1) գիշերերգություն, բյուրատեսակ, սրտաբուխ
   2) հաղթահասակ, ածխահանք, հնօրյա
   3) մեղմահնչյուն, զմրուխտաշող, ամենաշքեղ
   4) ամենամյա, փութաջանորեն, խորհրդավոր

6. Հոմանիշ բառերի շարքն է՝

   1) տենչանք, բաղձանք, կամք
   2) ապիկար, անկարող, շնորհալի
   3) պատրանք, ցնորք, խաբկանք
   4) գթալ, խղճալ, հուզվել

7. Թվական կա

   1) Դեպքը կատարվել էր տասնյակ տարիներ առաջ:
   2) Քսանամյա երիտասարդը հաղթեց բոլորին:
   3) Հրապարակում հավաքվել էին հազարավոր ցուցարարներ:
   4) Երեխան հացի մեկ չորրորդ մասը կերավ:

նախադասության մեջ:

8. Հարաբերական դերանունների շարքն է՝

   1) երբևիցե, որքան, ինչպիսի
   2) որտեղ, երբ, ինչքան
   3) քանի, որչափ, այնինչ
   4) ինչու, ինչչափ, ուր

9. Համադասական շաղկապ կա

1) Ուրախ կլինեմ, եթե անես այդ լավությունը:
2) Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը:
3) Երբ լույսը բացվեց, շարունակեցին գործը:
4) Դուռը բացվեց, բայց ներս չմտան:

նախադասության մեջ:

10. Մոտիկ էլեկտրակայանից մոռացել էին միացնել Ծմակուտի լույսերը , իսկ մեծ լուսինը միայն փայլում էր և չէր ողողում տները, որովհետև .....

նախադասության քերականական և տրամաբանական շարունակության տարբերակն է՝

1) թանձր անտառը քնած էր:
2) մթում վարարել էր հեղեղատը:
3) մարդիկ հնձից եկել էին ու քնել, և հարկավոր չէր ո՛չ լույս, ո՛չ զրույց:
4) գյուղը տաք պատուհաններով նայում էր կայարանի խաղաղությանը:

11. Փոխաբերություն կա

1) Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ:
2) Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանուշակը:
3) Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ձայն հանում:
4) Մի անհուն դառնություն և կսկիծ ավերեց նրա չքնաղ օրը:

նախադասության մեջ:

12. Բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն)

1) Արամը տուն էր վերադառնում զվարթ ուրախ ջահելացած:
2) Երջանիկ էր զգում որ մուրազը կատարվեց երկիրը տեսավ վայելեց կարոտն առավ:
3) Հանկարծ լսվեց հայոց զորքերի կայծակի որոտ հիշեցնող ձայնը և Մարզպետունու գնդերը թափվեցին հագարացիների զինվորների վրա:
4) Դիլան դային նստած հնձանի պատի տակ տարուբերվում էր մտքերից ինչպես քամու բերանն ընկած չոր տերև:

նախադասության մեջ:

*13-16-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը*

13. Նախադասությունները դասավորի՛ր տրամաբանական հաջորդականությամբ:
Գրի՛ր միայն նախադասությունների համարները:

1. Նա սկզբում թվարկում է արգելվածները, որոնց մեջ էին բոլոր սողունները:
2. Բոլորը հնազանդվեցին, թեև դժվար էր հրաժարվել դարերով եկած սովորությունից:
3. Քանի որ մինչ այդ Հայաստանում օգտագործում էին ամեն տեսակ միս, արքան գրեց, թե դրանցից որը կարելի է ուտել, որը՝ ոչ:
4. Ասում են՝ հայ ժողովրդի քաղաքակրթության հարցում մեծ նշանակություն են ունեցել Վաղարշակ թագավորի քառասուն հրովարտակները, որոնցից մեկը նվիրված էր միս ուտելուն:

Պատասխան՝ _____

14. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:

*Ուսանողական գիտական ընկերությունում կարդացված զեկույցները բավականաչափ ինքնուրույն էին:*

*Պատասխան՝ սխալ է՝* _____
*պետք է լինի՝* _____

15. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր:

Ոչ մի կերպ չէր կարողանում խոստովանել իր սխալի համար, մինչև որ չպատահեց այդ դժբախտությունը:

Պատասխան՝ *սխալ է՝* _____
*պետք է լինի՝* _____

16. Տրված բառերը տեղադրի՛ր բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:

Երբ երեխաներից մեկը բարձրացավ լուսամուտը և սկսեց ..... թակել, հաջի Սողոմոնը, արագ կերպով ..... լուսամուտը, բռունցքի ..... վայր գլորեց ..... :

*( բարձրանալ, աղմուկ, բաց անել, հարված)*

*Պատասխան՝ 1.*---------- *2.*----------

*3.*---------- *4.*----------

*17-32-րդ առաջադրանքները կատարի՛ր ըստ տեքստի*

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Արքայական պալատի պարտեզում՝ նախշազարդ փայտե սեղանի շուրջ, բազմել էին Անիի երևելիները: 2. Գագիկ արքայի կինը՝ Կատրանիդեն, որ գինարբուքների ու զվարճանքի սիրահար էր, պատվարժան այրերին խնջույքի էր հրավիրել: 3. Երփնավառ պարտեզում հնչում էր տավղի մեղմասահ նվագածությունը, որ ներդաշնակում էր շուրջբոլորը կաքավող դրախտահավերի ու գեղաճեմ սիրամարգների համրընթաց զբոսանքին: 4. Համադամ ուտեստներով, ախորժագրգիռ խորտիկներով ծպնրաբեռնված սեղանի շուրջ, կարմրափրփուր գինով լի սափորները ձեռքներին, կանգնած էին երիտասարդ մատռվակները, նրանց կողքին՝ բարեկազմ, սիրունատես սպասուհիները:

5. Մեծարգո այրերը, ինչպես միշտ, խնջույքի էին եկել իրենց սպասավորների հետ, որոնց սեղանը դրված էր տերերի սեղանից պատշաճ հեռավորության վրա: 6. Նրանց մեջ էր նաև սիրունատես Վանատուրը՝ քաղաքապետի սպասավոր-խորհրդականը, Անիի մեծ զվարճախոսը:

II

1. Մինչ խնջույքը կսկսվեր, թագուհին դշխոյական կեցվածքով մոտեցավ հյուրերին և նվիրեց մեկական անձեռոցիկ: 2. Այնուհետև փոքր-ինչ հանդիսավորություն հաղորդելով ձայնին՝ հայտարարեց, որ մրցանակ կստանա նա, ով մինչև ճաշկերույթի ավարտը առաջինը կասի՝ երբ և ինչի համար են գործածում այն: 3. Այրերը շփոթահար ու զարմացած շուռումուռ էին տալիս նրբահյուս ժանեկազարդ կտորը, և ոչ ոք չէր կռահում՝ ինչի համար է այն: 4. Քաղաքապետը մրցանակը ստանալու ակնկալիքով անձեռոցիկը տվեց Վանատուրին, որ նա գտնի պատասխանը և հասկացնի իրեն:

5. Վերջինս, վերցնելով այն, լուռումունջ նստեց իր տեղում, և երբ թագուհին անցավ սպասավորների սեղանի մոտով, ցած դրեց մսի կտորը, վերցրեց անձեռոցիկը, սրբեց բերանը, հետո ձեռքերը:

6. Տեսնելով այդ՝ թագուհին հիացած բացականչեց.

— Վանատո՛ւրը շահեց մրցանակը:

*17-20-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը*

17. I հատվածի 1-ին նախադասությունից դու՛րս գրիր մեկ ածանցավոր բառ:

Պատասխան՝ _____

18. I հատվածի 3-րդ նախադասությունից դու՛րս գրիր մեկ անհոդակապ բարդ բառ:

Պատասխան՝ _____

19. I հատվածից դու՛րս գրիր *գինի մատուցող անձ* բառակապակցության իմաստն արտահայտող բառը:

Պատասխան՝ _____

20. II հատվածից դու՛րս գրիր ենթադրական եղանակի բայերը:

Պատասխան՝ _____

*21-25-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ*

21. Բուն բացահայտիչ պարունակող նախադասություն է՝

1) I. 1-ը
2) I. 6 -րդը
3) II. 2 -րդը
4) II. 6 -րդը

22. Կապ խոսքի մաս պարունակող նախադասություն է՝

1) I. 2 -րդը
2) I. 3 -րդը
3) II. 2-րդը
4) II. 4 -րդը

23. II հատվածի 2 -րդ բարդ նախադասությունը բաղկացած է

1) 2
2) 3
3) 4
4) 5

բաղադրիչ պարզ նախադասությունից:

24. II հատվածում ըղձական եղանակով դրված բայ պարունակող նախադասություն է՝

1) 1 -ը
2) 3 -րդը
3) 4 -րդը
4) 6 -րդը

25. Բաղադրյալ ստորոգյալ կա

1) I. 1-ին
2) I. 2-րդ
3) II. 1 -ին
4) II. 2 -րդ

նախադասության մեջ:

*26-29-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը*

26. II հատվածից դու՛րս գրիր բաշխական թվականը:

Պատասխան՝ _____

27. II հատվածից դու՛րս գրիր ժխտական դերանունը:

Պատասխան՝ _____

28. I հատվածից դու՛րս գրիր ենթակայական դերբայը:

Պատասխան՝ _____

29. II հատվածի 5 -րդ նախադասությունից դու՛րս գրիր մակբայը:

Պատասխան՝ _____

*30-32-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ*

30. Տեքստից չբխող կամ նրա բովանդակությանը հակասող միտքն է՝

1) Անիի երևելիները գտնվում էին արքայական պալատի պարտեզում:
2) Արքայի կինը պատվարժան այրերին կերուխումի էր հրավիրել:
3) Նա բոլորին անձեռոցիկ է նվիրում և ասում, որ ով իմանա, թե ինչի համար են այն օգտագործում, նվեր կստանա:
4) Քաղաքապետ Վանատուրը լուռումունջ օգտագործում է այն և շահում մրցանակը:

31. Մինչ խնջույքը կսկսվեր, թագուհին դշխոյական կեցվածքով մոտեցավ հյուրերին և նվիրեց մեկական անձեռոցիկ

նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

1) դշխոյական – հարաբերական ածական
2) կեցվածքով - գոյական, գործիական հոլով
3) մոտեցավ - սահմանական եղանակ, վաղակատար անցյալ
4) հյուրերին - գոյական, տրական հոլով

32. Քաղաքապետը մրցանակը ստանալու ակնկալիքով անձեռոցիկը տվեց *Վանատուրին*, որ նա գտնի պատասխանը

նախադասության մեջ ընդգծված բառի կատարած պաշտոնն է՝

1) միջոցի անուղղակի խնդիր
2) ուղիղ խնդիր
3) ներգործող խնդիր
4) հանգման խնդիր